



ԵԳԻՊՏՈՍ
Ղրգ.
ՏԱՐԵԿԱՆ... 45
ՎԵՑԱՄՍԵԱՑ 25

ԲԱԺՆԵԳԻՆԸ
ԿԱՆՈՒԿ Է



ՓԻԻՆԻԿ

ԱՐՏԱՍԱՇՄԱՆ
Ֆր.
ՏԱՐԵԿԱՆ... 15
ՎԵՑԱՄՍԵԱՑ 8
ԿՈՎԿԱՍ
ՏԱՐԵԿԱՆ ԲԱՂ. 6



ՇԱԲԱԹ ԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ


ՉԵՌՔԷ ԿԸ ԾԱԽՈՒԻ ՀԱՏԸ ՄԷԿ ՂՐՈՒՇ ՈՂՋ

Բ. ՏԱՐԻ

ՇԱԲԱԹ 28 ՍԵՊՏԵՄԲԵՐ 1901

ԹԻԻ 20

ԵՒՐՈՊԱՆ ՈՒ ՀԱՅԿ. ՀԱՐՑԸ



Վերջապէս ծայր տալ կ'սկսի մեր ամենասուրբ իղձերուն ու յոյսերուն արեալոյսը, Հայուն փառափախան հորիզոնին վրայ, որ տարիներէ ՚ի վեր ծածկուած էր սեւ ու կարմիր ամպերով: Շաբաթուան հեռագիրները տեսակ մը զովութիւն բերին մեր այրած արեւուն. իլրտում մը կը նշանակուի դահլիճներուն կամարներուն ներքեւ. բան մը կը դառնայ հոն, մութին մէջ:

Հայկական Հարցը, 19րդ դարուն վերջին փառորդին մէջ իր ստացած բոլոր փուլերովը մէջտեղ կը գցուի. իր գոյութիւնը պատճառաւորապէս հաստատուած էր արդէն. 300,000 զոհերուն արեան ծովը զանի մկրտեց. փանի՛ փանի՛ փանդուած գեղերուն ու փառաներուն, վաններուն ու եկեղեցիներուն – որոնք դեռ կը մխան–մոխիրներովը արքազործուե-

ցաւ անի. 50,000 որբերն ու այրիները զանի կ'երգեն իրենց ցաւագին հեծեծալնփին մէջ: Սասուն ու Զեթուն, իրենց ազնիւ ընդվզումներովը փառաւորեցին այս Հարցը, որ հիմա, գլուխ կը տնկէ բարձր, գերեզմանի սուկումը շնչելով հոգեւար կայսրութեան մը դժնէ Գահակալին, հայ ազգին թագակիր Գահապետին, որ կատաղած, օրհասականի մը գալարումներով ակռաները կը կրնրէ, նոր նախնիներու, նոր ջարդերու նապաղիքին մէջ կը թապալսի ու կերակրէ մարդակերպը, ա՛յդ կերպով գոնէ մարել հրդեհը, որ բռնկած է ներսիդին ու կը լափէ իր դիւահար հոգին...:

Այս պահուս մեր առջեւ ունինք վաւերական վկաները, նշանները, որոնք յոյս կը ներշնչեն մեզի թէ՛ Հայկական Հարցը՝ նոր ու գործնական փուլի մը մէջ կը մտնէ: Այդ վաւերականներն են.

1. Կլասո գումարուած Ի.րդ խաղաղութեան Համաժողովին որոշումը,

որուն հեռագրով ձայնակցած են Ամերիկայի Միացեալ Նահանգները.

2. Վերջին Չարդերը Մուշի ու Երզնկայից մէջ, որոնք վերջնապէս հաստատուած են Եւրոպային կողմէն, հակառակ Դրան ոչ — անսովոր ստաններուն եւ ուրացումներուն.

3. Անգլիական կառավարութեան Կ. Պոլսոյ Մեծ — Դեսպանին տուած ազդու ծանուցագիրը, որով կ'ազդարարէ Դրան անյապաղ պատժել ջարդերուն հեղինակները, ստանց նայելու անոնց դիրքին ու հանգամանքին, եւ Հայկական Նահանգներն օժտել Բարենորոգումներովը, զոր ստորագրած եւ որոնց գործադրութիւնը խոստացած է Սուլթանը: Հակառակ պարագային, Մեծ — Դեսպանը կ'սպառնայ, իր կառավարութեան անունով թէ՛ նեւիչ ու բռնի միջոցները պիտի դրուին 'ի գործ.

4. Ֆրանսային Արսախին գործերու Նախարարը Մ. Տէլգատ, միւս բոլոր եւրոպական տէրութեանց Դահլիճներուն Երջարեալաններ դրկած է, Հայկական Հարցին գոհացուցիչ լուծում մը տալու պատեհ ժամը հասած նկատելով, եւ անոնց լուրջ ուշադրութիւնը հրաւիրելով Հայկ. նահանգներու մէջ Բարենորոգումներուն գործադրութեան անհրաժեշտութեանը վրայ:

5. Փարիզ այցելութեան միջոցին Վեհ. Չարին, Նախագահ Մ. Լուպէի եւ Նախարարապետ Մ. Ռալսէի Ռուսոյի միջեւ տեղի ունեցած խօսակցութեան զլխաւոր նիւթերն եղած են, ըստ նորագոյն հեռագրի մը, հետեւեալները. — Արեւելեան ու Ծաղազոյն Արեւելիկ խնդիրները, Շրանգո — թուրք Միջադէպը եւ *Հայկական Գործերը*:

Վերեւ նշանակուած պատճառական լուրերը, որոնք սուս չ'ելան մինչեւ հիմա, բնական է թէ ամեն Հայու երակներուն մէջ սփոփարար սարսուռ մը պիտի հոսեցնեն, թէ եւ *սկեսիկ* ու յոռետեսութիւն ուխտած մտեր, կամ ա-

ւելի նիւրբ, հայ կեանքին ու աշխարհին հետ ո' եւ է կապ չ'ունեցող մեռած հոգիներ, իմաստ հեզնութեամբ մը փութան ողջունել այդ լուրերը: Մենք այդպիսի *Թոյլաններ* չ'ենք մեղադրել, այլ, ընդհակառակն նեւարիտ արգահաստանքի մ'առարկայ կ'ընենք զիրենք:

Եւ որովհետեւ մեզի դաւանանքը ըրած ենք Արսասանմանի հայութեան մէջ միտ վառ պահել Մայր Զգացումը, պիտի ջանանք օգտուիլ ներկայացող ամեն առիթներէ, ծանօթացնելու համար «Փիւնիկ»ի ընթերցողները ամեն քաղաքական դարձումներուն, որոնց մէջէն կ'անցնի Հայկ. Հարցը:

Ահաւասիկ քանի մը տողեր, «*Հայկական Հարց*»ը վերնագրով տեսակէն, զոր պատրաստած է մ'եր յարգելի եւ հայութեան համակրելի հրատարակագիրը, Տիար Հ. Առաքելեան, Տիեզերական Խաղաղութեան Ի. րդ Համաժողովին 'ի Կլասո:

«Շրեկուանէ չ'է որ Հայերը խորհած են ընդվզիլ քրտական հարստահարութեան դէմ, որ միտ աւելի անգութ ու անիրաւ ձեւեր կը հագնէր: Արեւելի Հայկ. Նահանգները հեռաւորագոյններն են, եւրոպական կեդրոններէն ամենէն աւելի անջատ մնացածները, եւ հո'ն է որ խիստ զգալի կ'ըլլան քրտական վարչութեան թերութիւնները: Արդէն 5 դար է որ Հայերը կը հեծեն թուրքերուն գարեւի լուծին տակ. քրտանեայ ա'զգ մը միայն կար որ կը շահագրգռուէր քրտանեայ Հայոց ողբալի բաղդովը: Ռուսիան, Մեծն Պետրոսէն ի վեր, ջանքեր կ'ընէր ազատագրելու Հայերը, եւ Կասարիկէ Բ. յղացալիկ Անդր-Կովկասի նահանգներով — որոնք այն ատեն թուրք եւ պարսիկ լուծին տակ էին — հայկական քաղաւորութիւն մ'ստեղծելու ծրագիրը:

Դիտենք որ իր յաջորդները բռնեցին քաղաքականութիւն մը, զոր միակ արժանին կը նկատէին Եւրոպային, արժանի

քիսոնեայ տէրութեանց, այսինքն, գար-
 շելի եւ երկար ատեն սարուած լուծէն
 ազատելու քիսոնեայ ազգերը, սալու
 անոնց քիչ առ քիչ ազատութիւնը շա-
 րունակ ապակեղորնացնելով զանոնք-
 Սակայն թուրքիան անդամատելու
 աւս քաղաքականութեան, միւս երո-
 պական Տէրութիւնները, մանաւանդ,
 Անգլիան ու Յունասան, դէմ հանեցին
 թուրքիան ամբողջ ու անկախ պահելու
 քաղաքականութիւնը: Ու այս քաղաքա-
 կանութիւնը փոքր Ասիոյ քիսոնեայցի հա-
 մար եղաւ պատահաւոր մեծամեծ չարիքնե-
 ռուն ու աղէտներուն, որովհետեւ, թէ եւ
 թուրքիոյ Սուլթանները, 1839ի Կիւլ-
 հանէի Հրովարտելովը, 1856ի Խաթթը
 Հիւսնայունովը, հրատարակեցին բոլոր
 Օսմ. հպատակներուն միութիւնը, օրէն-
 քին առջեւ առանց խտրութեան ցեղի
 կամ կրօնի, խոստան, ցաւապահովել ա-
 նոնց կեանքը, պահիւն ու ինչքը, ջնջել
 տուրքին ձեւը, նեղումները, գրաւումները,
 բայց բոլոր այս խոստումները բնաւ
 չ'իրագործուեցան: Ասոր համար է որ
 Հայոց ստապանները մեծ էին առ-
 դէն 1877-1878ի պատերազմէն առաջ,
 եւ Ռուսիան, որ շատ լաւ գիտէր թէ ի՞նչ
 լուծի սակ կը գտնուէին Հայերը, չը
 թերացաւ իր աւանդական դերին
 մէջ ու ստանձնեց անոնց շահերը: Սան-
 Սթեֆանօյի Դաւենագրին մէջ մուծուե-
 ցաւ Հայերուն վերաբերեալ հաստատու-
 մը, որ ի նպաստ Հայաստանի երոպա-
 կան միջամտութեան առաջին ցուցը
 եղաւ:

Ահաւասիկ հաստատուածը.

*Յօդ. 16. Բ. Դուռը վրան կ'աննէ
 իրագործելու առանց այլ եւս ոչաջնե-
 յու, Հայերէն բնակուած նահանգնե-
 ռուն մէջ տեղական պետերուն պա-
 հանջած բարեշարձացումներն ու բարե-
 նորոգումները, եւ հոն երաշխաւորե-
 յու անոնց ապահովութիւնը Բուրսե-
 ռուն ու Չերքէզներուն դէմ:*

Մնացեալը գիտնիք արդէն. գիտնիք

թէ՛ ի՞նչպէս Անգլիան մէջ նետուեցաւ
 չուզելով որ Ռուսիան ստանձնած ըլլար
 Հայաստանի պատշապանի դերը. եւ թէ՛
 ա՛յդ նպատակով էր որ կնիեց Կիպրոսի
 դաւենագիրը, 1878 Յունիս 4ին, ինք
 ստանձնելով բարեկարգումներուն գոր-
 ծադրութեան հսկելու պատշտօնը, որուն
 փոխարէն գրաւեց առժամեայ կերպով
 — ըստ մեզնչեման — Կիպրոսը, եւ
 խոստացաւ պահպանել Օսմ. Կայսրու-
 թեան ամբողջութիւնը: Գիտնիք նաեւ
 Պերլինի Վեհաժողովն ու Յուլի 30-
 ուածը, որուն ուժովը, երոպայական վեց
 Մեծ Տէրութիւններն իրենց երաշխաւո-
 րութեան սակ առին Հայուն բաղդին
 բարեկարգութիւնը: Հայկ. Հարցը, դա-
 դրելով մնալէ ներքին քաղաքականու-
 թեան հարց մը, միջազգային հարցի
 կարգը մտաւ: Յաջողութիւն մ'էր ասի
 մեզ համար, բայց անկից ծագեցաւ եւ
 մեր մեծ Աղէտը: Սուլթանը տարբեր
 կերպով ըմբռնած էր ու տարբեր մի-
 ջոցներով խորհեցաւ լուծել մեր հարցը,
 ա՛յն է Հայերը բնաջինջ ընելով: Հայ-
 րենիքի կացութիւնը, նախապէս յոռի,
 վաստակացաւ: Ի վերջոյ երջանկալի՞ւ-
 սակ ներսէս վարժապետեան դիմեց 1880
 ին երոպական տէրութեանց, Կրեթէի; —
 ո՛չ հիմնական — ու իրբանանու վարչու-
 թեան նման բան մը խնդրելով Հայաս-
 տանի համար ալ: Սակայն երոպան
 խուլ մնաց, դժեց իր պատշապանու-
 թեանց դէմ: Ի՞նչ ընէինք, Քուրտերէն
 ու Չերքէզներէն կողոպտուած, անար-
 գուած, սպաննուած. Դրեկն հարստա-
 հարուած, ու երոպայէն լքուած. դի-
 մեցինք, գերագույն, վսեմ միջոցին. —
 Յեղափոխութեան: —

Մնացեալը չ'գիտցող Հայ կա՞յ. Կար-
 նոյ, Դում Գաբուի, Չերքուի, Վանայ
 ընդվզումներն ու ընդհարումները 1890
 ին. յետոյ, 1894ին Սասունի ջարդերը,
 որոնք համբու բերին դրին երոպական
 անտօթ ու մեղապատր անտարբերու-
 թիւնը: Երոպան միջամտեց ու 1895

Մայիսի 11ին, Սուլթանին մասոյց նոր Բարենորոգումներու ծրագիր մը։ Ապս- իլ — Համիտ, զանազան խռնակներ յարուցանելէ յոճած, ՚ի վերջոյ տեղի տուաւ, 1895 Հոկտեմբեր րնդունեց զանի ու վաւերագործեց, թէ եւ, դարձեալ, իր ըմբռնած եղանակովը ձեռնարկեց այդ բարենորոգումները գործադրելու, Ընդհ. Չարդերը սարքելով, կազմակերպելով ու իր հասարակ արքանեակներուն ձեռնովը զանոնք վարելով...

1895 Սեպտ. 1 Բ. Դրան Յոյցը, Չեթունի ապսամբութիւնն ու 1896 Օգ. 1 Օսմ. Պանֆայի Դէպքը. ահա՛ հայ բողոքին գործնական արտայայտութիւնները. սակայն ՚ի գո՞ւր անցան այդ ամենը։ Վերջապէս, 1896ի Դեկտ. 1ին, Ռուսիոյ Վեհ. Չարը հրաման քրաւ իր Մեծ Դեսպան Մ. Նելիսովի. «Սուլթանը հրաւիրելու իր անունով, ան- նաբացարձակ խօսքերով, անյապաղ եւ առանց թագուն դիտումի գործադրելու խոստացուած բարենորոգումները, եւ յայտարարել անոր որ, եթէ չը վարուէր եւրոպային միահամուռ փափագին համաձայն, մեծագոյն վճանգներու պիտի ենթարկուէր»։

Եւ սակայն Սուլթանը մնաց անդրդուելի, եւ ընդհակառակն, բազմապատկեց պաշտօնական հոռապետներուն (Համիտի) թիւը, իր պաշտօնեաներուն գործադրած խոստութիւնները, եւ, անպատիժ ծաղրեց թէ՛ Ռուսիան, թէ՛ Ֆրանսան եւ թէ՛ Անգլիան. ու դեռ կը բարունակէ խնդալ եւրոպայի վրայ։

Տեսնենք թէ հիմայ Սուլթանը պիտի խնդա՞յ թէ լայ. սպասենք եւ տեսնենք թէ՛ ի՛նչպէս պիտի ինքզինք հանէ այս անգամուան անել դրութենէն։

«Աստ՛ր ալ հարը կը գտնէ, Համիտ կ'ըսեն անոր»։ պիտի մըքմըքան յոռե- տեսները։

Իսկ մենք, քալ առ քալ հետեւելով եւրոպական մամուլի հրատարակութեանց, որոնք կը շօշափեն Հայկ. Հար-

ցին այս նոր փուլը, կը սիրենք յուսալ թէ՛ այս անգամ եթէ ոչ վերջնական կամ ամբողջական, գոնէ մասնակի կարգադրութիւն մը պիտի ըլլայ, արգիլելու համար բարունակութիւնը ջարդերուն, բարենորոգումները մտնելու, եւ դիրացնելու համար հայրենիք վերադարձը գաղթականներուն։

Յուսանք եւ սպասենք։

Խ.

ՍՈՒՐԱՅՈՂՆԵՐԸ

*Եկեղեցոյն դրանն առաջ, բակին մէջ
Շարուած էին խումբ մ'աղիասներ այր ու
կին,*

*Ռեանք նստած, ուսնք կանգնած՝ գլխահակ
Փոքր պնակներ կարկառեին անգորդին։*

*Ռեանք շատու, արեւն վայրկեան անդադար,
«Տերը մեկի տեղ հազար տալ»ն կրկնեին.
Ռեանք դեմքով կեղծ, ձեւերով ծաւաճուռ,
Ռեանք յոյս ու հեզ, այնտեղ մուռային։*

*Ճիշդ դրան քով կար մի աղիաս ծերունի,
Իր մորուքը մազերն արքողք անիճերակ,
Ծաղապատիկ նստած ձեռքերը ծունկին,
Իր քովը հաստ ցուպը եւ փոքր մի պնակ։*

*Նայուածքը հեզ, աղօս, յստած էր գեհնին.
Եւ շրթները գեք անգամ մը չ'եր շարժեր,
Ողորմութիւն խնդրել, այլ մեկն մի անգորդ,
Պնակին մէջ միշտ յուռայ մը կը ձգէր։*

*Երբ մեկնեցան արեւն, պնակն էր յեցուն,
Ռուռն մեջքն առաւ ծերունին մի քիչ բան,
Եւ մնացածն ալ՝ դողդոջուն ձեռքերով,
Տուռ անոնց որ իրեւ շատ յոճեցան։*

*Մտեանով ծեր մուռացիկն՝ որ դանդաղ
Եկեղեցոյն դրանն մեկիկ դուռս կեցնէր,
«Հա՛յր, գոչեցի, ինչո՞ւ այդպէս ըրիր դուն»,
Կեցաւ յանկարծ եւ տեսայ որ կը ժպտէր։*

Կրքընեցաւ ցուպին, ճայնով մը անուշ՝
«Տղաս, ըսաւ, մարդիկ անեկն այ մուրան.
«Ունակ յիկ, ինձ պես, ունակ խօսե՞րով.
«Քաղղը մեկին սայ շաս, միւսին՝ ոչ մի
բան»

«Այ թե սայ ան, որ բաղդին շաս սսանայ՝
«Իր հէս ի գուր յո՛սնոյ անբաղդ ընկերին,
«Քոյր ու օրհնեկն, խինդ ու խայտակ լինի
կեանքն»:

Եւ իր ճանքան շարունակեց ժպտազին:

* * *

Ք Ր Ո Ն Ի Կ

Ա Ջ Գ Ա Յ Ի Ն

Առաջարկ մը. Արտասահմանի մէջ թերթ կամ հանդէս հրատարակող մեր Պատ. Եղբայրակիցներուն ուշադրութիւնը կը հրաւիրենք Ս. Բէթրսպուրկի մէջ 175 տարիներէ ի վեր հրատարակուող Ս. Բեքրայուրկափիա Վեսեմուսի (Բեթրսպուրկի Աւետարներ) թերթին վրայ, որ իշխան Ուխտումսկիի օւղանն է և կէս-պատմական ձև ունի: Իշխան Ուխտումսկիին քաջածանօթ է ո՛րքան իր ծայրայեղ հայասիրութեամբ, նոյնքան ալ ազգեցիկ անձնաւորութիւն մ'է, արդի Չար Վեհ. Նիկողայի անսահման վստահութիւնը վայելող:

Երբ այժմեան Չարը Թագաժառանգ էր, իր արևելեան ճամբորդութեան մէջ իրեն կ'ընկերանար երիտասարդ Իշխան Ուխտումսկին, իբրև նկարագրող ուղևորութեան, որ և նկարագրեց յետոյ երկու վեթխարի պատկերազարդ հատորներու մէջ, ստանալով տպագրութեան ծախքի համար արդի Չարէն 300,000 ռուբլի:

Իշխան Ուխտումսկին երկու ան-

գամ զրկուած է Չինաստան (այժմու Վեհ. Չարին կողմէն) իբր արտակարգ դեսպան և հիմայ հազիւ 38 տարեկան ըլլալով, տարակոյս չ'կայ թէ քանի մը տարի վերջը նախարար նշանակուի:

Եւ որովհետև այսպիսի հզօր, ազգեցիկ ու հստատեղ անձնաւորութեան մը միակ օրկանին, Ս. Բեքրայուրկափիա Վեսեմուսիին մէջ կրնան երևիլ յօդուածներ, որոնց հրատարակութիւնն անկարելի է ո՛ր և է ուստիայ թերթի մէջ, կ'առաջարկենք որ Արտասահմանի բոլոր մեր եղբայրակիցները, որ տէր են թերթի մը կամ հանդիսի մը, հաճէին մի մի օրինակ զրկել նոյն թերթին խմբագրութեանը որ ամեն դիւրութիւն և արտօնութիւն ունի հայկական գործերու մասին գրելու, եւ կրնայ, հետեւաբար, կարևոր քաղուածներ ընել զրկուած թերթերէն ու հանդէսներէն, զորս կ'արտագրէ:

Կը յուսամ թէ մեր եղբայրակիցները պիտի լրջօրէն նկատի առնեն ներկայ առաջարկը:

Ս. Բեքրայուրկափիա Վեսեմուսիին, ինչպէս ըսի՞ք, 175 տարուան դոյութիւն ունի. ամենահին ուսուրագիրն է, նաև Մեծն Պետրոսի հիմնածը: Առաջին յօդուածը Մեծն Պետրոս ի՛նք է խմբագրած, ինչպէս կը տեսնուի դիւաններու (archives) մէջ մնացած վաւերաթղթերէն:

Ս. Բեթրսպուրկափիա Վեսեմուսիի հասցէն է.

Rédaction du Journal

St. Peterbourgskaja Vedemosti

Rue Spalernaja Maison N. 26

St. Petersburg

— Սասունցիի Մուշի կառավարչին քաջած են վերջերս հետեւեալ հեռագիրը որուն թարգմանութիւնը կ'արտագրենք Բրօ Արմենիսայէն, թիւ կ'ուզէք մեզ տարագրել, հետերնիգրերէ՛ք քանի մ'եւրոպական հիւպա-

տոսներ, որոնց երաշխաւորութեան ներքեւ պիտի ստիպուինք թողուլ մեր բնավայրը: Եթէ կուզէք անպատճառ շինել զօրանոցները և մեզ հոս մնալ ստիպէք, չ'ենք ընդունիր: Մենք հողագործ ժողովուրդ մ'ենք, մեր կիներն ու զաւակներըը միշտ դաշտն են, երբէք չ'ենք կրնար տոկալ որ մեր ընտանեկան պատիւը բռնաբարուի զօրքերէն: Այս ձեռնարկը մեզի համար աղէկ չ'պիտի ըլլայ: Երբ ամայանն մեր գեղերը, կրնաք այն ատեն ազատօրէն ուզածնիդ շինել»:

Կառավարութիւնն ատեն մը վարանելէ ետք, ճարտարապետներ զրկեց գործադրելու համար իր ծրագիրը: Հայոց կիները դնացին ցրուել զանոնք, կտարտեցին անոնց գործիները, փախուստի խուճապ ու մահուան սպառնալիք ձգեցին այդ շէնք շինողներուն մէջ, որոնք, սարսափահար, առանց իրենց ետին նայելու, Մուշ վերադարձան:

Ա Ր Տ Ա Ք Ի Ն

Փարէն.

—Յուզիչ զրոյց, Բրքի Պղծօն ամսոյս 18ին հրատարակեց հետեւեալ հռազիւրը, զոր Պերլինի իր թղթակցէն ստացած կ'ըլլայ.

«Մինչդեռ Տիւնքէրք կը փառաբանէր Զարը, յուզիչ զրոյց մը, չ'ենք գիտեր ո՛րմէ գուրս ելած, պտըտեցաւ հոս: Նիկօլան՝ Մ. Լուպէն ու միեւնոյն ասեակ Գերմանիոյ կայսրն ալ պիտի հրաւիրէ եղեր նաւային մարզանքներուն 'ի Ռուսիա:

«Տրուած ըլլալով 1870ի յիշատակները, Վիլհէլմ Բ. չ'կրնար, ցնոր անօրինութիւն, գալ Բարիդ: Հանրապետութեան նախագահը չ'կրնար նոյնպէս երթալ Պերլին: Ուրեմն Նիկօլա Բ. Փրանսայի ու Գերմանիոյ միջև մերձեցում մ'արծարծելու և ամրապնդելու

գելու համար, գտած պիտի ըլլայ նախագահ Լուպէի ու Վիլհէլմի հանդիպուին յարմար վայրը, ռուսական հողի վրայ»:

—Դաշնակցութիւն Անգլիոյ դէմ.— Գերման մամուլը բնականաբար շատ մը հետեւանքներ հանել կ'ուզէ Նիկօլա Բ. ի ճամբորդութենէն ի Փրանսա:

Այս քաղաքական դէպքին մեծ նշանակութիւն կուտայ մանաւանդ, ի մէջ այլոց, Նուվէլիսոք քը Հանկոուրկ թերթը:

Այս լրագիրը, որ այնքան երկար ատեն Պիզմարքի պաշտօնական թերթն եղաւ, կը հաստատէ թէ՛ Փրանսական գաղթային պետութեան հսկայական ծաւալումը ցանկութիւնները կը գրգռէ Անգլիոյ, ոչ պատեհ առիթի մը միայն կը կ'սպասէ քանդելու այս նոր գաղթային պետութիւնը:

«Այս պատճառաւ, կը կնքէ Նուվէլիսոք իր կարծիքը, դաշնակցութիւնը Ռուսիոյ հետ, որ բնական թշնամին է Անգլիոյ, հարկաւորապէս ամենաբարձր արժէքն ունի Փրանսային համար: Արդորովհետև Ռուսիան ոչ նուազ պէտք ունի Փրանսայի նեցուկին, նոյն երկու տէրութիւնները միացնող դաշնակցութիւնն աւելի անքակտելի է հիմայ քան ինչ որ չ'էր Նաշօլէօն Ա. ի օրով»:

— Անիշխանականաց դէմ.— Սեպտեմբեր 20 ին, ուրբաթ կէս օրին, Պրիւքսէլի Մեթրօքոյ հիւրանոցին մէջ, տեղի ունեցած է գաղտնի նիստ մը, որուն նախագահած է ռուսական դեսպանատան բարձրաստիճան անդամներէն մէկը, շատ մ'օտար դիւանագէտներու ներկայութեամբ:

Այս գումարման շարժառիթն ու հոն անցած դարձածը գաղտնի կը մընան: Սակայն, հաւաստի աղբիւրէ կ'իմացուի թէ՛ այդ գումարումը նախաշաւիղ փորձ մ'է հիմերը գնելու Պրիւքսէլի մէջ հակա՛իշխանական Համաժողովի մը:

Պէլճիքական կառավարութիւնը կը ծանուցանէ թէ՛ այս կարգի ո՛չ մէկ դումարում տեղի ունեցած է:

— Պատերազմ յԱւերիկա. — Գառազասէն (Վենեճուէլա) հասած լուրերերուն նայելով՝ Գոլոմպիացիները պարպեր են եղեր Ռիօ-Հախա քաղաքը, զոր անմիջապէս Վենեճուէլացիները գրաւեր են:

Տ Ե Ղ Ա Վ Ա Ն

— Ն. Բ. Մոնաւմէս Աշի իշխանն այս հինգշաբթի առաւօտ Մաշաաշրահ զբօսանաւով Ն. Բ. Խտիվը դիմաւորելու համար մեկնեցաւ:

— Խտիվական շոգեկառքը, առջի օր Աղեքսանդրիա հասաւ ու շ պիտի մնայ Ն. Բ. Խտիվին տրամադրութեան տակ, Երոպայէն վերադարձին:

— Նեյրնէշ Պակօ օյ Էնիքոյի ընդհ. կառավարիչը Սիր Էլուին Բալմբր այս չորեքշաբթի հասաւ Երոպայէն:

— Ժանսախսը դեռ գոյութիւն ունի Եգիպտոսի քանի մը քաղաքներուն մէջ. միայն, Բօր-Սալիս մեկնող շոգեկառներուն համար գրուած տասնորեայ ֆառանքիւսն շնչուեցաւ:

— Էգպէն էջ Համաւիլի 3 բնակիչներ թունամահ եղած են, չորոք մ'ալ կը գտնուի ծանր վիճակի մէջ: Կին մ'ու իր եղբայրը, ոճրին հեղինակներն ըլլալու կասկածին տակ ձերբակալուեցան:

— Կասդած շուն. Մէհալլէթ Բուպրա երեք բնիկներ կատղած շունէ մը խածնուելով՝ Գահիրէի բուժանոցը փոխադրուեցան:

Տ Ա Ն Ո Ւ Յ Ո Ւ Մ

Աղեքսանդրիոյ տեղական-ազգային ծանօթ խնդրոյն նկատմամբ «Արշալոյս»ի վերջին թիւերուն մէջ երեցան կարգ մ'անկապ զեյզեկարանութիւններ, Փանդեզիներ, եւն: «Փիւնիկ»ի լուրջ ուղղութիւնը չը ներեր զբաղիլ ու զուր զբաղեցնել մեր Պատ. ընթերցողներն այդ կարգի վայրաբանութիւնները հերքող հրատարակութիւններով: Սակայն, «Փիւնիկ»ի 15րդ թիւին մէջ երեցած «Ճշմարտութիւն»ը


վերնագրով խիստ կարեւոր նամակը, զոր խմբագրութեանս զրկած էր Տիար Եդ. Թուրչուճեան և որով հրապարակ հանած էր Եգիպ. Առաջնորդ Գեր. Տ. Յովսէփ Սրբազանին յայտարարութիւնները, առիթ տուած էր, ինչպէս կը յիշեն «Փիւնիկ»ի ընթերցողները, «Արշալոյս»ի մէջ հիւնգ աւուրներով ստորագրութեամբ նամակի մը հրատարակութեան, աւեհիշող ու խեղաքիտեալ հոշակելով Տ. Եդ. Թուրչուճեանի նամակին ինչպէս նաև Սեպտ. 1 ին մեր եկեղեցին յատկապէս բերել տրուած դաղանի ոստիկանաց վրայ «Փիւնիկ»ի նոյն թիւին մէջ հրատարակուած յօդուածներուն պարունակութիւնը:

Թէ՛ այդ և թէ՛ էջ-նիշ արարական թերթի մը գոյութեանն ու անոր մէջ «Փիւնիկ»ի բռնն յօդուածներուն թարգմանօրէն ենթադրեալ հրատարակութեան մասին պիտի գրենք յաջորդով:

— Պիտի հրատարակենք նաև թարգմանութիւնը Լէօն Թօշաթօյի նշանաւոր նամակին, որ երեցած է այս շաբաթ Աղեքսանդրիոյ Ռեճօրմ օրաթերթին մէջ:

Ա Ն Պ Ա Տ Վ Ա Ո Ի Մ Ա Ս Ա Կ Ո Ւ Թ Ե Ա Ն

Գ Լ Ո Ւ Ի Գ Ո Ր Ծ Ո Յ Ը



Նախորդ Թաղ. Խորհրդի շուժումը ուրանալով Տ. Մկրտիչեան կրօնէ. Թրաւ է որ այդ ՉՈՐՄ անձերը հրաժարական տուին, բայց օր մը ետքը հրաժարականին կտ առին: Այդ յիշած չորս անձերը չորս տարի պաշտօն վարելու ամենաբացարձակ իրաւունք ունին ըստ Սահմանադրութեան:

Բայց ինչո՞ւ Տ. Մկրտիչեան չուզեր ծանրանալ սա կետին վրայ թէ նախորդ Թաղ. Խորհուրդը եօթը անգամէ կը բաղկանար ո՛չ թէ չորս: Ինչո՞ւ մնացեալ երեքին վրայ խօսելէ կզգուշանայ, թուուցիկ կերպով մը միայն ըսելով. «Թաղ. Խորհուրդ մը իր

հրաժարեալ փոփրանասևնութեան տեղ
 օժանդակ անդամներ միթէ չի՞ կրնար
 առնել: Նախորդ Թաղ. Խորհուրդի յուժ-
 ման պատմութիւնը գիտցողներուն կը
 հարցնեմ թէ հրաժարեալ փոփրանաս-
 ևնութիւն մը երբէք կա՞ր օրինական
 տեսակէտով. անշուշտ ո՛չ. վասն զի ո՛չ
 թէ փոփրանասևնութիւնը կամ թէ ը-
 սենք՝ մեծամասնութիւնը հրաժարած
 էր, այլ ակոյր յոփրանութիւնը — եօթը ան-
 դամները միասին. միայն անոնց հրա-
 ժարականներուն պատճառը և տեսա-
 կէտը կը տարբերէին:

Օրիշ ԽՍԻՎԻԱՅԻ մէջ կազմուած
 մարմինը եթէ նոր մարմին մը չէր,
 այլ պարզապէս հրաժարած կամ լուժ-
 ուած Խորհուրդն էր որ իր հրաժարա-
 կանը ետ կառնէր, ինչո՞ւ բոլոր ան-
 դամները չի հրաւիրուեցան. ո՞ւր
 մնացին Վսեմ. Բէյիզեան Միքայէլ
 Պէյը և Տեարք Գ. Իփէքեան և Ալեք-
 սան ձէվահիրճեան. միթէ այս երեք
 անձերն ալ միւս չորս անձերուն պէս
 ժողովրդէն ընտրուած չէ՞ին և յորս
 սարի պաշտօն վարելու աւելնարացա-
 ճակ իրաւունք չունէին՝ ըստ Սահմա-
 նադրութեան: Սահմանադրութիւնը եր-
 բէք կը թոյլատրէ՞ ո և է վարչութեան
 կամայական կերպով կա՛մ խաբէութեամբ
 մը իր մէջէն դուրս հանել ազգէն ընտր-
 ւած փոքրամասնութիւն մը և անոր տեղ
 նոր անդամներ առնել իր ուզած անձե-
 րէն: Կըմբռնէք որ այսպիսի գործողու-
 թիւն մը կամովին հրաժարած մէկ — եր-
 կու անդամի տեղ օժանդակ անդամ-
 ներ առնելու պարագան չէ՞, ինչպէս կը
 ջանայ ներկայացնել մեզի Տ. Մկրտիչ-
 եան, այլ այնպիսի խոշոր զեղծում
 մ'է՞ որ ինքնին բաւական է Խորհուրդ
 մը ապօրինաւոր նկատելու: Տեսէ՞ք
 թէ անճարակ փաստաբանը արդի Թաղ.
 Խորհուրդը նախորդին շարունակու-
 թիւնը ներկայացնելով ի՞նչ դիւրքի մէջ
 կը զնէ զայն յաչս հասարակութեան:
 Արդի Թաղ. Խորհուրդը իր կազմու-

թեան օրէն նախընտրեց ինքզինքը
 «Վսեմ. փաշայէն կարգուած» և «առ-
 ժաւեայ» հոչակել, քան իր մէջէն
 մէկ քսնի անդամներ կամայական
 կերպով դուրս հանած ըլլալու ծանր
 ապօրինութիւնը իր վրայ առնել: Տ.
 Մկրտիչեան արդեօք կուզէ՞ ըմբռնել
 թէ Խորհուրդը իր ԿԱԶՄՈՒԹՅԱՆ հա-
 կասահմանադրական եւ առժամեայ
 հանգամանքէն ազատելու ճիգերովը
 ուրիշ բանի չի յանդիշ բայց միայն
 հաստատել մեզի թէ այդ մարմինը իր
 ՈԳԻՈՎՆ իսկ հակասահմանադրական
 է՞ գործած ըլլալով կամայական զեղ-
 ծում մը իր երեք անդամներուն դէմ...:

Տիար Մկրտիչեան այսպէս հակա-
 սութենէ հակասութիւն կը գլտորի,
 մի՞ միայն իր առաջին յօդուածով հրա-
 պարակ նետած ստորիւնը ծածկելու
 համար հասարակութեան աչքերէն:
 Այս նպատակով գերադոյն ճիգ մ'է
 կրնէ softիւնսնը «լուսաբանելու» կամ
 աւելի ճիշդը՝ անոր որոշ և մեկին ի-
 մաստը խեղաթիւրելու: Յոյց տալու
 համար թէ ո՞ր աստիճան խախուտ են
 իր առարկութիւնները և ծիծաղելի՞ իր
 պատճառաբանութիւնները, հետեւինք
 իր «լուսաբանութիւն»ներուն:

Նախ ձեռք կառնէ «Մշակակն Ա-
 սեւնայեան» բացատրութիւնը:

Սկզբաւր կընդունի Տ. Մկրտիչեան
 թէ՛ «Մշակակն Ասեւնայեան բացատրու-
 թիւնը առաջի բերան հակասական կը
 թուի Սահմանադրական սկզբակց հետ»:
 Բայց, կըսէ. «Երբ բացառիկ պարա-
 գաներ կը ներկայանան՝ անոնց դէմ՝
 բացառիկ դարմաններ կը տնօրինուին
 որոնք կրնան Սահմանադրութեան ՏԱ-
 ՌԻՆ հակառակ ըլլալ քայց ո՛չ թէ Ո-
 ԳԻՆ»:

Անմիջական հետեւութիւն մը —
 ուրեմն Տ. Մկրտիչեան կընդունի թէ
 Մշակակն Ասեւնայեանութեան պաշտօնը

(այն ալ, լա՛ւ ըմբռնեցէք, ո՛չ թէ Խորհրդի մը կամ յաջորդական Խորհուրդներու, այլ տեղոյս հայ հասարակութեան Մշակակն Ասեկապետութեան պաշտօնը — տեսակ մը յկեանս նախագահութիւն:—) հակասական կը հնչէ սահմանադրական սկզբանց դէմ և Սահմանադրութեան գոնէ ճառիկն հակառակ է: Հետեւապէս այս կէտի մէջ Տ. Մկրտիչեան մեզի հետ հաւանաւոր է կը մնայ լոկ քննել թէ այդ պաշտօնը Սահմանադրութեան սրբին ալ հակառակ է թէ ոչ:

Այս կէտը պարզելու համար, Տ. Մկրտիչեան կը գիմէ այնպիսի պատճառաբանութիւններու որոնք պիտի կարենայինք ընդունիլ եթէ իրերու ճշմարիտ կայութեան համաձայն գրտնէինք զանոնք: Մէջ բերենք այդ պատճառաբանութիւնները:

Նախ օրինակ կը բերէ ինքնակաշարքիները, որոնք, կըսէ, կը հաստատուին Պատրիարքներէն, աւանց ժողովրդային ընտրութեան: Մակայն ինքնակաշարքի մը Մշակակն Ասեկապետութեան հետ յարմար բազմապատկեան եզր մը չէ՛. վասն զի իննամակալութիւնը անձն մը չի բազկանար, այլ մարմին մ'է, որը թէև ժողովրդէն չէ ընտրուած, բայց Ազգային Կեդրոնական Վարչութենէն (և ոչ թէ միայն Պատրիարքէն) սահմանուած է՝ Ազգ. Երեսփ. Ժողովի մէկ բացառիկ որոշումին հետեանքովը. ասկէ զատ իննամակալութիւն մը մշակակն հանգամանք չունենար, ու գիտենք թէ ինչիրը ո՛չ թէ «Ատենապետ» բառին վրայ է, այլ ՄՇՏԱԿԱՆ բառին: Ես և անցողակի ըսենք. Տ. Մկրտիչեան բաւական սուր յիշողութիւն ունի միտքը բերելու համար թէ՛ Բերայի իննամակալութիւնը որ մշակակն իննամակալութեան հովեր սկսած էր առնել, հակասահմանադրական հոչակուեցաւ թաղին ժողովրդէն, որը ի

վերջոյ տապալեց այդ գլխու փորձանք իննամակալութիւնը, զօրաւոր պայքարով մը որը մղողներու մէկ խմբին հետ յայտնի կապեր ունէր ինքը Տ. Մկրտիչեան ալ:

Տ. Մկրտիչեան կը տրամաբանէ այսպէս. ինչպէս որ Պատրիարքները իննամակալութիւններ չը հաստատելին գեթ ուրի առաջիք առնելու հանար, «Տեղ պայտէս ալ» Ա.Սե. Իզմիրլեան Սրբազան երբեք ի պատուէն կը հեռանար, ազգային յոյժ կարևոր շահերու պահպանութեան համար մտահոգ՝ «իր քսցակաշարքեան ասեկ Առաջնորդի փոխաւորդ կը կարգէ մի՛ միայն մէկ անձ, Վսեմ. Պօղոս փաշա Նուպար»: — Այս պարագայէն առաջ եկած է, կըսէ, «Մշակակն Ատենապետ» բացատրութիւնը:

Շատ լա՛ւ. Իզմիրլեան Սրբազան այն ժամանակ ի հարկէ բնաւոր պատճառ մը ունէր այդպիսի բացառիկ անօրինութիւն մը ընելու, որը սակայն հակասահմանադրական չնկատուելու համար կարևոր պայմանէ մը կախուած էր — այդ պայմանը յիշեալ անօրինութեան առժամեայ հանգամանքն էր: Առաջնորդը վերջնականապէս հրաժարած չըլլալով՝ իր քսցակաշարքեան անձ մը իրեն փոխանորդ կարգեր է: Այն օրը երբ Առաջնորդը այլ ևս Պատրիարք էր, բնականաբար կը դադրէր Եգիպտոսի Առաջնորդ ըլլալէ, որով իր առաջնորդութեան շրջանին վերաբերեալ փոխանորդութեան այդ պաշտօնն ալ կը վերցուէր Վսեմ. պաշտօնակալին վրայէն. ու Եգիպտոս կունենար իր Առաջնորդական Տեղապահները և հուսկ ուրեմն իր սեփական Առաջնորդը: Պարզ է ուրեմն որ Վսեմ. փաշայի Առաջնորդական Փոխանորդութեան պաշտօնը արդէն վաղուց վերջացած պէտք է ըլլայ: Տիտր Մկրտիչեան հոս ալ մեզի հետ հաւանաւոր է. այս կէտին վրայ աւելիմ ընթերցող-

ներու մասնաւոր ուշադրութիւնը կը հրաւիրեմ. վասն զի սկզբունքով մեզի հետ կատարելապէս համաձայնելէ վերջը, Տ. Մկրտիչեան երկուստեք ընդունուած մեկնակէտէն (point de départ) կերթայ կը հասնի այնպիսի արտառոց եզրակացութիւններու որոնք գլխովին կը հակասեն ընդունուած այդ սկզբունքէն դէմ:

Աւրեմն խնամով արձանագրենք Տ. Մկրտիչեանի մեզի հետ ընդունուած ամենակարեւոր մէկ կէտը որ այս է. «Մշտական Ատենապետ» բացատրութիւնը ի ներկայիս ու է իրական ար. ժէք չունի, այլ ճիշդաւ մ'է պաշտպան:

Ու է կասկածի կամ երկդիմութեան տեղի չթողլու համար՝ մէջ բերենք բուն իսկ իշխութեանը.

Այդ պարագայէն ծագում կառնէ «Մշտական Ատենապետ» ճիշդաւ... եւ սակայն ճիշդաւ մըն է աւիկայ եւ ոչ թէ հակասահմանադրական կազմութեան ապստոյց մը» (Նախորդ Թաղ. Խորհրդի ինքնաւարձեալ 1899 ի Ապրիլի ընտրութեանց ատեն, եբք Վսեմ. վաշային առաջարկուեր է ոմանց կողմէ որ ինքք հրաժարական չի տայ, ըստ որում «Ազգին Մշտական Ատենապետն է», Տ. Մկրտիչեան կը հաւատաէ մեզի թէ՛ «Ն. Վսեմութիւնը այդ բանը մերժեց և յայտարարեց թէ ինքն ալ իբրեւ ազգին մէկ պարզ անդամը կողմէ պաշտօնէ քաջաբար եւ ուրիշներու հաւասար ընտրողի եւ ընտրելիի իրաւունքով ԲԱՎԱՍԱՆԱՆԱԼ: Այս կերպով ահա Ն. Վսեմութիւնը ինքզինքը ենթարկեց ժողովրդին քուէներուն եւ միաձայնութեամբ ընտրուեցաւ Թաղ. Խորհրդին անդամ»: Քիչ մը վարը կաւելցնէ. «Քանի որ սահմանադրական ընտրութեան մը անուրանալի իրողութիւնը մէջտեղն է (Նախորդ Թաղական Խորհրդի ինքնաւարձեալ ԱՅՈ՛, արդի Թաղ. Խորհրդի ինքնաւարձեալ Ո՛Զ), Թաղ. Խորհրդի

նախկին մէջ գործածուած Մշտական Ատենապետ ՏԻՏՂՈՍԸ, որ չի մոռնաւ թէ ԼՈԿ ԻԲՐԵԻ ՏԻՏՂՈՍ ԳՈՐԾԱՅՈՒՄԻ Է, ի՞նչ ոյժ ունի իրականութիւնը փոխելու»:

Բնական է որ «Մշտական Ատենապետ» ի անուանական տիրուածով պատուուած անձնաւորութիւն մը, ո՛րչափ ալ անհատական բարձր դիրք ունենայ և անժխտելի արժանիքներով օժտուած ըլլայ, իրաւունք չունենար Թաղական Խորհուրդ մը լուծելու, նոր Թաղ. Խորհուրդ մը կարգելու չափ կարեւոր իրաւասութիւններ իր վրայ առնելու: Տ. Մկրտիչեան այս հետեւութիւնը պարտաւոր է ընդունիլ, վասն զի իր գրածներուն անհրաժեշտ և անխուսափելի հետեւութիւնն է, և այս հետեւութեամբ զօրութեամբ պարտաւոր է մեզի հետ ընդունիլ նաև թէ՛ երբ Վսեմ. Պողոս Փաշան իր պարզ տիտղոսը իբր իրական իշխանութիւն գործածած է նոր Թաղ. Խորհուրդ մը կազմելուն մէջ, այդպէս կազմուած Թաղ. Խորհուրդ մը չկրնար երբեք աւանանադրական Խորհուրդ մը նկատուիլ, այլ շաշայքնէի է, կամ թէ ըսենք՝ ինքնակաշմ, ինքնաքոյս, մէկ խօսքով ապօրինաւոր: Ճի՛շդ այդ անել կացութեան թէ՛ ինքզինքը և թէ՛ Պատ. Թաղ. Խորհուրդը ազատելու համար է որ Տ. Մկրտիչեան ոգի ի բռին կաշխատի իսբել իրողութիւններուն մօտէն տեղեակ չեղողները-որոնք միշտ և ամեն տեղ ժողովրդին մեծամասնութիւնը չը կազմեն-անոնց հաւատացնելով թէ այս Թաղ. Խորհուրդը նախորդին շարունակութիւնն է: Այս ալ ինչ օքանչելի գիւտերուն կարգին մէջ նշանաւոր տեղ մը կը բռնէ. այս գիւտին զօրութեամբ արդի Թաղ. Խորհուրդը ո՛չ միայն իր կազմութեամբ եւ ոգիով աւանանադրական պիտի դառնայ, այլ և պիտի ազատուի իր առժամեայ հանգամանքէն և մինչև 1903

Մայիս ամիսը պաշտօնավարութիւնը պիտի ապահովուի: Բայց գծբաղդաբար իրեն համար, երբ կարգը եկաւ իր այդ գիւտը դրական փաստերով հաստատելու, այդ տեղ անձ մէջտեղ ելաւ իր անճարակութիւնը: Այս կէտի մէջ Տ. Մկրտիչեան իսկապէս արգահատանքի արժանի է. արդարեւ, ի՞նչպէս կրնար փաստեր և իրողութիւններ մէջտեղ բերել, քանի որ իրականութիւնը իր ներկայացուցածին հակառակն էր: Բնականաբար իր բոլոր շինծու փաստերը կարճ պիտի գային յայտնի իրականութեան առջև, և, իր բաւերը իրեն վերադարձնելով՝ թեթեւ քննութիւն մը բաւական պիտի ըլլար հիմէն խախտելու իր բոլոր առարկութիւնները»:

Տեսանք արդէն որ արդի Թաղ. Խորհուրդը իբր նախորդին շարունակութիւնը կարենալ ընդունելու համար, նախ՝ պէտք է սուս նկատենք Խորհրդին պաշտօնական յայտարարութիւնը, երկրորդ՝ Խորհրդին օրինազանցութիւնը, զեղծումը դորժած ըլլալը ընդունինք, քանի որ ապօրինի կերպով իր մէջէն դուրս ձգած է անդամներ որոնք 4 տարի պաշտօն վարելու ամենաբացարձակ իրաւունք ստացած էին ժողովրդէն: Ուրեմն ամէն ոք պէտք է ըմբռնէ թէ լաւագոյն փաստաբաններն անգամ, ամենէն «օրէնսգէտ» անձերն անգամ անկարող են արդի Թաղ. Խորհրդի օրինաւորութիւնը պաշտպանել ի՞նչ ձևով որ ըլլայ, թո՛ղ թէ մեր անճարակ փաստաբանը:

«Մշտական Ատենապետ» ի հարցին մէջ ալ մէկ կողմէ Տ. Մկրտիչեանի և միւս կողմէ Թաղ. Խորհրդին և Սրբ. Առաջնորդին տեսութիւններուն միջև այնպիսի խոչոր հակասութիւն մը կայ որ կարելի չէ դանց ընել: Նկատելով խնդրին աւագ կարեւորութիւնը, նկատելով որ Աղեքսանդրիոյ հայ հասարակութիւնը խորապէս կը շահագրգռու-

ուի այս հարցով, նկատելով որ ժողովուրդը մի անգամ ընդ միշտ լուսաբանուիլ կուզէ իրերու ճշգրիտ կացութեան մասին, այսինքն կուզէ իրաւամբ հասկնալ թէ «Մշտական Ատենապետ» ի մը վերոյի՞ն ենթարկեալ են Աղեքսանդրիոյ հանրային բոլոր գործերը, թէ ոչ՝ իրապէս յարգուած ու գործադրուած է հոս Աղգային Սահմանագրութի նը, այս նկատումներով անչեմ դանդաղիչ Աղգ. իշխանութեան և իր փաստաբանին յայտարարութեանց միջև գոյութիւն ունեցող այդ խոչոր հակասութիւնը մասնանիչ ընել:

Ահա այդ հակասութիւնը:

Տ. Մկրտիչեան մեզի կը յայտարարէ թէ՛ «Մշտական Ատենապետ» իրապէս գոյութիւն չունի. պարզապէս սիսդոս մը, անուանական բան մ'է այն որ դործնականի մէջ ոչիկն ուժ ունի իրականութիւնը փոխելու. այդ սիսդոսը Վսեմ. Փաշային ժամանակաւ Առաջնորդի փոխանորդ կարգուած ըլլալէն ծագում առած է. Վսեմ. Փաշան իբրև ազգէն մէկ պարզ անհատը՝ ընտրուի և ընտրելի իրաւունքներով կը բաւականայ. եթէ այսօր Պատ. Թաղ. Խորհրդոյ անգամ և Ատենապետ է, այդ պաշտօնը ունի շնորհիւ ժողովրդային ընտրութեան և ո՛չ թէ ո և է առանձին իրաւասութեան մը զօրութեամբ:

Արդի Պատ. Թաղ. Խորհուրդը այդ կերպ չը ներկայացներ Վսեմ. Փաշայի դիրքը Աղեքսանդրիոյ մէջ. Խորհրդին ծանօթ պաշտօնագիրը, օրինակներ, «Տեղոյս հայ հասարակութեան Մշտական Ատենապետ» կը ճանչնայ Ն. Վսեմութիւնը, և այս՝ ո՛չ թէ անուանապէս այլ իրապէս, նշմարապէս եւ ոչ կարծեօք. առանց այս ենթադրութեան ի՞նչպէս Խորհուրդը պիտի կարենար յայտարարել մեզի թէ ինք Ն. Վսեմութեան կողմէն է կարգուած, եւ ինքզինք յարգելի ղնծայելու շիւշօր իրաւունքն ալ ստացած է ո՛չ թէ ազգէն,

այլ ն. Վսեմութենէն: Տօփիւսանք մէջ-
տեղն է, և երկդիմութիւն չի վերցնել:

Լսե՛նք հիմա թէ ի՞նչ կ'ըսէ Սրբ.
Առաջնորդը. «հա՛ ն. Սրբազնութեան
Յայտարարութիւնը. «Վսեմ. Պօղոս փա-
շա նուպար Աղեփսանդրիոյ Հայոց
միաբնակչիքն է, Եգիպտական կառավա-
րութենէն աչ վաւերացուած»:


Ի՞նչ խոնարհ կարծիքով միաբնակչի-
քիութիւնը, տեղոյս հայ հասարակու-
թեան Մշակակ Աստեղապետութիւնը՝
տեսակ մը դիկտատուութիւն է ո՞ր
ո՞չ միայն Սահմանադրութեան թէ՛ սա-
ռիկ եւ թէ՛ ոգիին հակառակ է, այլ և
Առաջնորդական իրաւասութիւններուն
դէմ ոտնձգութիւն մը: Ի՞նչ այս վերջին
կէտի մէջ Տ. Մկրտիչեան ինձի համա-
միա պէտք է ըլլայ, քանի որ Մշակ-
ակ Աստեղապետ բացատրութեան ծա-
գումը Վսեմ. փաշային՝ ժամանակով
Առաջնորդի Փոխանորդ կաշգուելու
պարագային կընծայէ. արդ կարելի՞ է
ենթագրել թէ՛ հեղինակաւոր Առաջ-
նորդի Փոխանորդ մը կայ ա՛յնտեղ ուր
արդէն օրինաւոր Առաջնորդ մը ան-
ձամբ ներկայ է ու կը պաշտօնավարէ:

Ազգային իշխանութեան եւ իր
քարտուղարին յայտարարութեանց մէջի
ակներե հակասութիւնը ի՞նչպէս բա-
ցատրենք. ինչո՞ւ ամեն բան խորհրդա-
ւորութեան մէջ կը ծրարեն. ինչո՞ւ չեն
պարզեր մեզի թէ ո՞րն է իրական կա-
ցութիւնը. ինչո՞ւ մեզ մութի մէջ կը
թողուն, և իրենց հակասական յայտա-
րարութիւններով մեր ողջմտութիւնը
կը հեզնեն. այսպիսի միջոցներով է
որ ինքզինքնին յարգելի պիտի ընծա-
յեն մեզի:

(Շարունակելի)

ՄԻՀՐԱՆ ՏԱՄԱՏԵԱՆ

ՎԵՐՋԻՆ ՅԱՂԹՈՂԸ



Պատմութիւնը կաւանդէ մեզ թէ՛
ամեն երկիրներու ժողովուրդները եր-
բեմն կը բաժնուէին երեք գլխաւոր
դասակարգերու.

1. Ազնուական
2. Կղերական
3. Պուռժուա,

Անդին կը մնար հասարակ կամ
ռամիկ կոչուած դասակարգը, որոյ
բաժինն էր անտաշբերութիւն ու արհա-
մարհանք դէպ ի իրեն գոյութիւնը. . .

Այդ խեղճերը կամք չունէին,
ձայն չունէին, այլ լուռ՝ ստիպուած
էին համակերպիլ իրենց վրայ դրուած
խիստ օրէնքներուն, ճիւղալային բռնու-
թիւններուն և անտանելի զրկանքնե-
րուն. . . : Մարդկային էակներ էին
սակայն, զգալու, սիրելու, հասկնա-
լու, խորհելու տրամադրութիւններով
օժտուած, որոնք կարծես չարչրուե-
լու, թշուառութեան մէջ տապկուելու
համար միայն աշխարհ եկած ըլլային.
Փողոցներու սալաշատակները ամայի
չթողնելու համար ծնած — ինչպէս
կըսեն — մինչ անդին՝ բազդին երես
տուած, շոյած կղերականը, ազնուա-
կանը ու պուռժուան, կարծես ապրե-
լու իրաւունքին միակ օրինաւոր տէ-
րերը, հարուստ, ազատ, երջանիկ,
պերճութեան ու շքեղութեան մէջ,
անուշ երազի մը պէս կանցնէին իրենց
օրերը. . . :

Այսօր՝ յորմէ հետէ զարգացումն
ու լուսաւորութիւնը հասած են որոշ
բարձրութեան մը, ռամիկ ժողովուրդը
ճանչցուած է իբրև մարդ, և տիրա-
ջած՝ իր մարդկային իրաւունքներուն,
կրնայ վերջապէս ձայն բարձրացնել
իրեն շուրջ յուզուող խնդիրներու
առթիւ, պաշտպանել իր գոյութիւնը,
խօսիլ, բողոքել, ու կռուիլ եթէ հարկ

ըլլայ, հանդէպ վայրագ բռնարար-
մանը իր սուրբ և պաշտելի իրաւունք-
ներուն... Սյգ իրաւունքները սակայն
իրենց լայն նշանակութեամբ և դարձ-
նական առմամբ աւելի՛ ազատօրէն կը
վայելեն գուցէ Ս. Թորիկայի, Զուլիցե-
րիայի, Թրանսայի ժողովուրդները-
խոյ ուրիշ տեղեր՝ անուանական կամ
տեսակական բնութիւն մը ունին դեռ
անոնք դժբաղդարար. փորձը ամէն օր
մեզ ցոյց կուտայ այս տխուր ճշմար-
տութիւնը... :

Կը տեսնենք թէ՛ ժողովուրդին
աչքին քոյ փշելու համար երբեմն
փողով — թմբուկով անոք իրաւունքներ
տրուած կը հռչակեն հրապարակաւ.
Ենքնապէս, դադանի, մաքիավէ-
լական միջոցներով, այդ իրաւունքնե-
րը բռնարարելու կ'ենեն... :

Մէկուն հացը կտրել կսպառնան,
միւսը իշ պաշտօնէն զրկելու ետեւ
կ'ըլլան, անդին խեղճ խանութպանի
մը խանութը գոցելու միջոցները կը
փնտռեն... և հացի ահարկու խնդիրը՝
Տամոկէսի սուրին պէս կախելով խեղճ
մարդոց գլխին, լուելու, ճշմարտու-
թեան ձայնը խեղդելու կը դատապար-
տեն զանոնք... մինչ թշուառներուն
միտքը, սիրտը, խիղճը կ'ուրտա՛յ... և
զայրութի ու կատաղութեան կրակը
կը բռնկի մէկէ աւելի կուրծքերու
խորերը... :

Ըսել է, անցեալի այդ յիշեալ
երեք մենաշնորհեալ դասակարգերը
գոյութիւն ունին եղև տակաւին մին-
չև այսօր իրապէս !!! մինչ ժողովուրդը
սոսկ անուանակաւ կը կարծէր այլ ևս
այդ գոյութիւնը... իրենց մահաբեր
ազգեցութիւնը կայ ու կը մնայ եզեր
տակաւին, մինչ մենք կը կարծէինք
թէ քանդող ժամանակը վաղ՛ւց փըշ-
րած էր և ասիկայ... և կը շարունակեն
եղեր, այս անգամ աւելի՛ հրէշային մի-
ջոցներ, այսինքն սևեռակաւ ճնշում ի
քործ դնել հասարակ կամ ուսմիկ ժողո-

վրդին վրայ. ինչ որ աւելի՛ վնասակար,
ծեծէ, բանտէ, արտօրէ շատ աւելի դառն
ու սոսկալի է... դա՛ զխտակցութիւնն
ու արժանապատուութիւնը խորտակել է
մարդ — էակին հոգւոյն ու սրտին մէջ...
կենդանի դիակ մը դարձնել է զայն...
«Ոճրագործութիւններ» է՛ն ահաւելին.
միակ' աններելին... «Կեղծի՛ք են եզեր
ուրեմն տակաւին դրուած նոր օրէնք-
ները... : Իրամը դեռ կը ջալթանակէ.
և ամեն նուիրական ու վեհ բան առա-
թուր կոխելով կ'ուզէ անցնիլ յառաջ... :

Եւ սակայն հաւատա՞նք այսպէս.
ո՞վ է արդեօք զօրաւորը... Էքա՛ւ է
թէ ուր որ դրամ կայ, հոն ուժ կայ,
ուր որ ցեղի ազնուականութիւն կայ,
հոն՝ ազգեցութիւն կայ. որո՛ւ ձեռքն
որ խաչ կայ՝ հոն՝ բացարձակ տիրապե-
տութիւն կայ... : Հին և նոր պատմու-
թիւնները, գէպքերը և պարագաներն
ալ շատ անգամ մեր այս կարծիքը կը
հերքեն, այս հաւատքը կը խախտեն,
և բոլորովին հակառակը կ'ապացուցա-
նեն. «Հօրագոյնը հասարակ ժողո-
վուրդն է, ուսմիկ դասակարգն է...»
կը գոռան մեզի... :

Ռամիկ ժողովուրդը ոչխարի հա-
մակերպութիւնը ունի, կը ծռէ գլուխը
հարուածներու տակ, կը տանի լուիկ
որքան բեռ որ ծանրացնեն իր ուսե-
րուն, նա համբերող է, գուցէ ծայրա-
յեղօրէն համբերող... սակայն երբ այդ
համբերութիւնը սահմանը կանցնի,
օ՛հ այն ատեն ահաւելի՛ է... այն ատեն
վա՛յ այդ համբերութիւնը փորձողնե-
րուն... : Կը յարձակի, կը տապալէ.
տեսակ մը կատաղի մոլեգնութեան
թափով իրեն դէմ ելնող ամեն պատ-
ուար որքան ալ ամուր որ ըլլայ. կը
կոխկրտէ ամեն արդեւք, որքան ալ
անկոխտելի ըլլայ. անոք բարկու-
թիւնը ահարկու հրգեհի մը կը նմանի
որ կ'այրէ, կը լափէ ինչ որ իր դէմը
կ'ենէ. և կը հանգչի միայն այն ատեն՝

երբ ալ այրուելու նիւթ չգտներ իր առջև... :

Յիշենք Լուի ԺԶի դարը, Ֆրանսայի յեղավորութեան պատմութիւնը... յիշենք միայն Պասթիլի առումը. և այդ բաւական է... : Ովքե՞ր էին արդեօք այդ միջին դերեզմանին դռները խորտակողները... : ամենէն ամուր կարծուած պարիսպները փշրողները, ալ ու ձախ ա՛հ ու սարսափ, մահ ու աւեր սփռողները... : Չէ՞ որ կօչկակար Սիմոններ... : վարսայարդար Լըռուներ, ներկարար Բիէռներն էին... : և աւելի՛ն... կինե՛ր... : անօթութեանէ կատաղած, դալկացած մանուկներ սեղմած իրենց կուրծքին, թշուառութեանէ զրկանքէ, յուսահատութեանէ մոլեգնած կիներ... : մէկը իր էրկան սակրը, միւսը իր եղբոր մուրճը, անպին ուրիշներ՝ քարեր ու փայտեր ղէնք յրած, արդար եւ ահաւոր զայրութի մը խենդութեամբ գինովցած՝ կը յարձակէին զիրենք կեղեքողներուն, զրկողներուն և չարչարողներուն դէմ... :

Այդ զայրացած կատաղի առիւծին առջև, որը վերջապէս իր ոտնակոխ եղած իրաւունքները կը պաշտպանէր, տեղի տուին ե՛ւ կղերականը, ե՛ւ աղնուականը, ե՛ւ պուռժուան... զօրաւորը ուսմիկն էր... :

Եւ սակայն ինչի՞ մէջ արդեօք կը գտնէ այդ հէ՞զ ուսմիկը՝ իր ուժը... : նա դրամ չունի, զէնք չունի, բաւականաչափ զարգացում իսկ չունի... :

Նա՛ հզօր է իր կրած տառապանքներով, նա՛ իր զայրութի ամեհի կատաղութիւնը կը գտնէ իր կրած զրկանքներուն մէջ. և ցոյց կուտայ ուշ կամ կանուխ, վերջապէս, թէ՛ ինքն ալ մարդ է, և իրաւունք ունի ապրելու իւրեւ մարդ... :

Ամենէն մեծ բաները կը բղխին ուսմիկէն, ամենէն մեծ գաղափարները, ամենէն վեհ հանճարները, ամենէն վսեմ ու մեծահոգի մարդիկը կը ծնին

անոր ծոցէն. ամենէն բարձր և հրաշալի գործերը անորն են... : ինչո՞ւ... : որովհետեւ տառապանքը, զրկանքը զմարդ կը բարձրացնէ, վսեմախոհ կընէ, անձնուէր կընէ, դժացող կընէ, մե՞ծ կընէ մէկ խօսքով... : Եւ ով որ չէ՛ տառապեր, անօթի չէ՛ մնացեր, զրկանք, կեղեքում, անիրաւութիւն, բըռնութիւն չէ տեսեր, մարդկութեան խորունկ վերքերը մատովը չէ՛ շօշափեր, այլ ծնած վայրկենէն՝ բազդը ժպտեր է երեսին. պերճութեան, շքեղութեան, շուայլութեան մէջ յղփացեր է, -ցանցաւ բացառութիւնները յարգելով - կըսեմ թէ՛ աշունք չե՛ն ապրիր... :

Այդ դասակարգը կընդունիմ թէ՛ կրնայ տալ գուցէ մե՛ծ դիւանագէտներ, լեզուագէտներ, զարգացածներ. բայց սրտի՛ մարդիկ, վե՛հ մարդիկ... : օ՛հ քիչ անգամներ կը ծնի... :

Նա՛ ճոխութեան մէջ, իր հրամաններուն տակ պահելով բազմաթիւ ծառաներ, վարժուած մի՛շտ հրամաններ և հրահանգներ շալու և հնազանդութիւն տեսնելու, երբ հանրային գործ մը վարել կստանձնէ, կը կարծէ թէ հանրութիւնն ալ իր ծառան է, որուն պէտք է հրամայէ ինք. և ան պէտք է հնազանդի և երբ օրին մէկն ալ անոր կողմէ ըմբոստութիւն կը տեսնէ, -արդար պահանջը իր արդար և սուրբ իշուունքներուն-, նախ տեսակ մը կը զարմանայ, ի՛նչ... : այդ կօչկակարի չրախը, ո՞վ է որ ելեր իր բարձր կամքին դէմ կըմբոստանայ, կամ այդ խոհարարի կտորը ո՞վ է որ կը յանդգնի բարձրապատիւ և կարող անձնաւորութեան մը դէմ գրիչ շարժել... :

Մ՛հ... : սակայն այդ խոհարարի կտորն էր որ Ոսկան-Նազարի պէս ժողովրդին մէկ պանծալի զակին վերջին դառն ամիսները քաղցրացուց թէ՛ նիւթապէս - ինչ որ գուցէ չէր ներքի իր համեստ քսակը - և թէ՛ բարոյապէս, օրինակելի անձնուիրութեամբ

մը... : Եւ այսօր՝ այդ խոհարարի կտորն է գարձեալ, որ օտար հիւանդանոցի մը մէջ պատն երեսին պառկող ազգային նշանաւոր դեպատանի մը երկար և տաժանելի ոգեւորը մեղմացուց նիւթապէս և բարոյապէս, անոր կտակարանը եղաւ, խոստացաւ երկիւղածութեամբ կատարել անոր վերջին կամբքը, և մեծ վարպետին վերջին շունչին հետ ընդունեցաւ և անոր թափուցին օրհնութիւնները... :

Եւ երբ ընդվզումը կը շարունակուի, բիրտ ուժը պատրաստ է... ոտիկանները հոն են ձերբակալելու համար բողբոջները, կամ վարժարանէն կը հրամայուի արտաքսել այն արի պատանին՝ որ համարձակեր էր վարժարանին մէջ, այսինքն ամենէն սրբազան յարկի մը տակ անցի ունեցած անպատշաճ ու անպատկառ վարուելքներ հրատարակու քննադատել... : Բայց չէ՞ որ հալածումը տարածում է... երբ բռնութիւնը իր դազաթնակէտին կը հասնի՝ կրնանք ըսել թէ՛ ազատութիւնը, այսինքն ճշմարտութեան յաղթանակը մօտիկ է... :

Վերև ըսի թէ՛ տառապիլը բարձրանալ է, և տառապանքը՝ փառապանծ ու լուսաւոր պսակն է հասարակ ժողովուրդին, ո՛րը պէտք է յարգել երկիւղածութեամբ... : Անոր կամբքը Սրբութիւն է, պէտք է խոնարհիլ անոր առջև, որովհետև այդ Սրբութիւնը նւիրագործեր են տառապանքը, չարչարանքը և արիւնը... :

Թողունք Ամերիկան, Ֆրանսան, և առնունք մեր սեփական ժողովուրդը, հայ ժողովուրդը :

Ովքե՞ր արդեօք մեր սիրուն Մայր Հայրենիքին պաշտելի հողերը թրջեր են իրենց կարմիր աշխուժ... : Ովքե՞ր արդեօք մինչև այսօր տակաւին կը տքան ժանտ թուրքին եւթադաւիտ տակ... : Չէ՞ որ հողագործ Մրտօները, բեռնակիր Մկրտները, կօշկակար կա-

րօնեղը, դերձակ Սագօներն են ատոնք... Քանի՞ ազգային շղերու անուաներ կան արդեօք մեր նահատակ եղբայրներուն պաշտելի անուանց ցանկին մէջ... :


Կը կրկնեմ. անո՛նցն է ուրեմն կամբքը, որը իրենց ասնջանքներով ու արեամբ սրբագործեցին. անոնց արդար պահանջներուն պէտք է գոհացում տալ. և մեր կղերական, ազնուական ու պուռժուա դասակարգը ուրիշ պարտականութիւն չունի՝ եթէ ոչ խոնարհիլ անոնց արդար իրաւունքներուն առջև... :

Այս գիտնանք սր հասարակ կամ ուամիկ ժողովուրդը միակն է որ կը ճանչնայ իր իսկական արժանիքով իրեն դատին կամ շահերուն օգտակար ու է անձնաւորութիւն, որովհետև կուրցած չէ՛ նա անհատական նկատումներով. նոյնքան դիւրութեամբ կը զանազանէ դարձեալ դառի մորթի տակ թագնուող և իր միամտութենէն օգտուիլ ուզող գայլը. նա դիտէ որոշել մաքուր զուտ ոսկին անարգ պղինձէն. այդ փորձառութիւնը դարձեալ նա ստացեր է տառապանքներու մէջ. յարգե՛նք իր դատողութիւնը :

Ամեն ինչ պիտի անցնի, ամեն ինչ պիտի ոչնչանայ ժամանակի ընթացքին հետ. ե՛ւ ազնուականութիւն, ե՛ւ մեծութիւն ե՛ւ հարստութիւն, բայց ժողովուրդը կա՛յ ու պիտի մնայ յաւիտեան. ժողովուրդը, որ մը այնքան երջանիկ, ոչքան այսօր թշուառ, իբրև մէկ ընտանիքի, մէկ ցեղի, միեւնոյն ժառանգութեան վրայ հաւասար իրաւունք ունեցող զաւակ, մի՛շտ երջանիկ, մի՛շտ պանծալի, հետևաբար և նա՛ է Վերջին ՅԱԻՏԵՆԱԿԱՆ ՅԱՂԹՈՂԸ... :

ՄԱՌԻ

20 Մեպ. 1901 Աղեֆս.



SALAMANDER

ՍԱԼԱՄԱՆՏԵՐ

Ապահովագրական Ընկերութիւն
ընդդէմ հրդեհի.

ԱՄՍԹԵՐՏԱՄ

Դրամագլուխ 3,125,000 ֆրանկ

Ամեն կերպ Ապահովագրութիւնք կ'ընդշնուին ընդդէմ հրդեհի ինչպէս նաև Մովային, Գետային և Յամաքային փոխագրութեանց արկածներու դէմ.

Իւրամատչելի գներ և պայմաններ

Գիւնը առ Ընդհանուր Իործակալ եւ Լիազօր-Փոխանորդ

ՄԻՀՐԱՆ ԳԱԼՖԱՆԱՆ

Աղեփսանդրիա, պզտիկ Մենչիէ Ապրուսարսա փողոց թիւ 10

L'ALLIANCE

Լ'ԱԼԻԱՆՍ

Մովային Ապահովագրական Ընկերութիւն.

ՊԵՐԼԻՆ

Դրամագլուխ 5,000,000 ֆրանկ

ԴԵՂԱՐԱՆ

ԱՓՐԻԿԵԱՆ

PHARMACIE D'AFRIQUE

Մոյն միամեայ հաստատութիւնը վերջերս աւելի ճոխացուցած ենք բերել աւելի եւրոպական ամեն տեսակ ընտիր դեղորայք, սրբախաչիթէներ եւ հանքային թարմ շուրեր:

Յաճախորդները կրնան ապահով ըլլալ գեղերուն լինածեալ եւ արագ պատրաստութեան ու գիններու չափաւորութեան մասին:

Իեղարանս կը յաճախեն Հայ եւ օտար բարեհամբաւ բժիշկներ ինչպէս նաև հանրութեան ծանօթ վկայեալ ու փորձ մանկաբարձներ:

ԳԻՈՐԳ ԹՕԳԱԹԵԱՆ

ԿԱՇԵԼԻՆԱՅ ՅԱՐԴԱՐԻՉ (Tapissier).

Բաղաքիս երեւելի հայ տուններուն ծանօթ յաճախորդ, կը պատրաստէ

գոհացուցիչ պայմաններով ամեն տեսակ կահեղէններ, վաշագոյր, ևն:

Յանձնարարութիւնք լինամով կը կատարուին:

Գիւնել Հայկ. Մեծ Սրճարանը:

ԿԱԹՆԱՏՈՒՆ, - ՃԱՇՍՐԱՆ

ՆՈՐ ԴԱՐ

Այս նոր բացուած ճաշարանին առաւելութիւններն են. ծովեղերեայ օդ, ամենամաքուր սպաս, և լինածեալ սպասարկութիւն, — ինչ որ կը փնտռուի յաճախ ուրիշ ճաշարանաց մէջ: —

Կերակուրները պոլսական ճաշակով պատրաստուած, իրենց համեղ ու այլազան հանդամանքներով արժանի են ամենապահանջկոտ քիմքերու գնահատման:

Գիւնեցէ՛ք նոր Դարի ճաշարանը, Ապու Չատրը փողոցին մէջ, Ղազարեան Եղբարց Վաճառատան դիմաց. գնացէ՛ք, ճաշակեցէ՛ք ու տեսէ՛ք: